

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ԼԱՎԳՈՒՅՆ
ՊԱՏՄՎԱԾՔԻ
ՄԱՏԵՆԱԸԱՐ

Օ՛ հե ն ռ ի

ՏԵՐԶԻՆ ՏԵՐԵՎԸ

И (Удобр)
252

О' Стерк

УТРОЖЬ
СТРЕЧЕ

86333

СЕН 1962

ДГМВ М. Горки адьма
ВИЛАЈЕТ ИНТАЈАНАСЫ
12000 В
ИИАО ОБЛА ГЛАЯ И' ТЕОГЕКА
ИИ. М. ГОРЬСОН

Стерк 1962

Մուսերենից թարգմանեց՝ Խ. Հրաչյան
 Նկարիչ՝ Ա. Զաֆարյան

О ГЕНРИ
 ПОСЛЕДНИЙ ЛИСТ

(На армянском языке)

Армянское государственное издательство
 (Айпетраг), Ереван, 1962

ՄՈԳԵՐԻՆԻ ՆՎԵՐՆԵՐԸ

Մեկ գուլար ութսունյոթ սենթ: Քուրն աչդ էր: Գրանից վաթսուն սենթը մեկսենթանոց նիկելադրամներ էին: Աչդ նիկելադրամներից ամեն մեկի համար նա ստիպված սակարկել էր նոսրավաճառի, կանաչի վաճառողի, մսավաճառի հետ այնպես, որ նույնիսկ ականջներն այրվում էին լուռ անբավականությունից, որ առաջացնում էր նման խնայողությունը: Գելլան երեք անգամ հաշվեց: Մեկ գուլար ութսունյոթ սենթ: Իսկ վաղը ծրնունդ էր:

Միակ բանը, որ կարելի էր անել, դա հին օթոցին ընկնելն էր ու լացուկոժ բարձրացնելը: Գելլան հենց այդպես էլ արավ: Այստեղից էլ ծագում է այն փիլիսոփայական հետևությունը, որ կյանքը բաղկացած է արցունքներից, հառա-

¹ Իմաստուններ կամ կախարդներ: Այստեղ՝ երեք լեզենգար արեղլյան իմաստուններ, որոնք իբր թե եկել էին երկրպագելու մտաբուժ ծնված մանուկ Հիսուսին և նվերներ էին բերել նրան:

շանքներից ու ժպիտներից, ըստ որում հառա-
շանքները գերակշռում են:

Մինչդեռ տանտիրուհին բոլոր այդ փուլերը
կանցնի, զննենք տունը: Կահավորված փոքրիկ
բնակարան՝ շաբաթական ութ դոլարով: Կահա-
վորանքում ոչ այնքան աղաղակող խեղճություն
կա, որքան պերճախոսություն մեր աղքատու-
թյուն: Ներքևում, շքամուտքի դռանը՝ նամակա-
տուփ, որի ճեղքից ոչ մի նամակ չի կարող ներս
սողոսկել, և էլեկտրական զանգի կոճակ, մի
զանգ, որից ոչ մի մահկանացուի չի հաջողվի
որեկ հնչյուն դուրս կորզել: Դրանց ավելացրած
այսպիսի մակագրություն մի քարտ. «Մ-ր
Ջեյմս Դիլինգհեմ Յունգ»: «Դիլինգհեմ»-ը ձգվել
էր ամբողջ երկարություն, մոտ անցյալի բարե-
կեցություն շրջանում, երբ վերոհիշյալ անվան
տերը ստանում էր շաբաթը երեսուն դոլար: Այժմ,
երբ այդ եկամուտը իջել է քսան դոլարի, «Դի-
լինգհեմ» բառի տառերը խամրել են, ասես լըր-
ջորեն միտք անելով՝ չկրճատվե՞լ արդյոք մինչև
համեստ ու սակավապես «Դ»-ն: Բայց երբ միս-
տրը Ջեյմս Դիլինգհեմ Յունգը տուն էր գալիս ու
բարձրանում վերնահարկի իր բնակարանը, նը-
րան մշտապես դիմավորում էր «Ջիմ» բացա-
կանությունը և քնքուշ գրկախառնությունը մի-
սիս Ջեյմս Դիլինգհեմ Յունգի, որն արդեն ներ-
կայացվել է ձեզ Դեյլա անունով: Իսկ դա, իսկա-
պես որ, շատ հաճելի է:

Դեյլան վերջ տվեց լացին և շարունակեց թեթևա-
կի անցավ այտերի վրայով: Նա այժմ կանգնած
էր պատուհանի մոտ և վհատությունով դիտում էր
գորշ կատվին, որն զբոսնում էր գորշ բակի երկա-
րություն մեզ ձգվող գորշ ցանկապատի վրայով: Վա-
ղը ծնունդ է, իսկ նա Ջիմին նվեր գնելու համար
միայն մեկ գոլար ութսունյոթ սենթ ունի: Ամիս-
ներ շարունակ նա տառացիորեն խնայում էր ա-
մեն մի սենթը, և ահա բոլորը, ինչին որ հասել է:
Շաբաթական քսան դոլարով հեռու չես գնա:
Ծախսերն ավելի շատ դուրս եկան, քան նա են-
թադրում էր: Ծախսերը միշտ էլ այդպես են:
Միայն մեկ գոլար ութսունյոթ սենթ Ջիմին նվեր
գնելու համար: Ի՞ր Ջիմին: Որքա՞ն ուրախ ժա-
մեր էր անցկացրել, խորհելով, թե ծնունդին ինչ
մի լավ բան նվիրի նրան: Ինչ-որ բոլորովին
առանձնահատուկ, հազվագյուտ, թանկագին մի
բան, որը թեկուզ չնչին չափով արժանի լիներ
Ջիմին պատկանելու բարձր պատվին:

Պատուհանների միջնամասում դրված էր տրյու-
մոն: Ձեզ երբեք վիճակվե՞լ է նայել ութդոլա-
րանոց կահավորված բնակարանի տրյունոյի մեջ:
Խիստ նիհար և խիստ շարժուն մարդը, նրա նեղ
փեղկերի մեջ փոխնիփոխ դիտելով իր հաջորդա-
կան արտացոլումները, բավական ճշգրիտ պատ-
կերացում կկազմի սեփական արտաքինի մասին:
Դեյլան, որը փխրուն կաղմվածք ուներ, հաջողու-
թյամբ տիրապետել էր այդ արվեստին:

Հանկարծ նա թափով ետ ընկրկեց պատուհանից ու նետուեց դեպի հայելին: Նրա աչքերը փայլում էին, բայց դեմքը քսան վայրկյանում գունաթափուկեց: Նա արագ շարժումով հանեց հերկարները և մազերը ցած թողեց:

Պետք է ասել, որ Ջեյմս Դիլինգհեմ Յունգ ամուսիններն ունեին երկու գանձ, որոնք նրանց հպարտության առարկան էին: Մեկը Ջիմի ոսկե ժամացույցն էր՝ պապից ու հորից մնացած, մյուսը՝ Դեյվայի մազերը: Եթե Սավայի թագուհին՝ ապրի դիմացի տանը, Դեյվան գլուխը լվանալուց հետո մազերը թափած կշորացնեի պատուհանի առաջ՝ հատկապես նրա համար, որպեսզի հարկադրեի խամբելու նորին մեծութունն թագուհու զուքսն ու զարդերը: Եթե Սոլոմոն թագավորը² ծառայեր նույն տանը իբրև բարապան և ներքնահարկում պահեր իր ամբողջ հարստությունը, Ջիմը, անցնելով նրա մոտից, ամեն անգամ ժամացույցը կհաներ գրպանից՝ հատկապես տեսնելու, թե ինչպես է նա նախանձից մորուքը փետտում:

Եվ ահա Դեյվայի սքանչելի մազերը ցած թափվեցին, փայլելով ու շողշողալով, ինչպես շագա-

¹ Հարավային Արաբիայի առասպելական թագուհի, որն աչքի էր ընկնում արտասովոր գեղեցկությամբ և իր պաշտօնի պերճանքով:

² Հին Հրեաստանի թագավոր, Հուշակված էր իր իմաստությամբ և հերթաթային հարստություններով:

նակագույն ջրվեժ: Նրանք ծնկներից էլ ցած իջան, թիկնոցի նման պարուրելով համարյա նրա ամբողջ մարմինը: Բայց նա իսկույն էլ, ջղայնացած ու փութալով, սկսեց նորից հավաքել դրանք: Հետո, ասես տատանվելով, մի բույն մընաց անշարժ կանգնած, և արցունքի երկու թեկերից կաթիլ ընկան կարմիր, մաշված գորգին:

Հնամաշ դարչնագույն ժակետը գցելով ուսերին, հնամաշ դարչնագույն գլխարկը դնելով դելիսին, նա արդեն սլանում էր ներքև, դեպի փողոց, շրջազգեստով ավելիով հատակը, շորացած արցունքը փայլեցնելով աչքերում:

Յուցանակը, որի առաջ նա կանգ առավ, ազդարարում էր. «M-me Sophronie. Ամեն տեսակ մազեղեն իրեր»: Դեյվան վազելով բարձրացավ երկրորդ հարկ և կանգ առավ, զժվարությամբ շունչը ետ բերելով:

— Իմ մազերը չե՞ք գնի արդյոք, — հարցրեց նա ափնոջը:

— Ես մազիդ գնում եմ, — պատասխանեց տիկինը: — Հանեք ձեր գլխարկը, անհրաժեշտ է ապրանքը տեսնել:

Նորից շողշողաց շագանակագույն ջրվեժը:

— Քսան գոլար, — ասաց տիկինը, ըստ սովորականի ձեռքի մեջ ծանր ու թեթև անելով մազերի թանձր մասսան:

— Տվեք շուտ, — ասաց Դեյվան:

Հետևյալ երկու ժամերը ճախրեցին վարդա-

գույն թեւերով,— ներողութիւնն եմ խնդրում մաշ-
ված փոխարեքութեան համար: Դեւլան շափշփում
էր խանութները՝ Զիմին նվեր գտնելու նպատակով:

Վերջապես դտավ: Անկասկած, դա ստեղծված
էր Զիմի և միմիայն Զիմի համար: Մյուս խա-
նութներում ոչ մի աչգպիսի բան չգտնվեց, իսկ
նա ամենուրեք տակնուվրա էր արել: Դա գրպա-
նի ժամացույցի պլատինե շղթայիկ էր՝ պարզ և
զուսպ զարդանկարով. նա հրապուրում էր իր իս-
կական արժանիքներով, և ոչ թե ցուցադրական
փայլով, ինչպես պետք է լինեն բոլոր լավ իրերը:
Այդ շղթայիկը թերևս կարելի էր նույնիսկ արժա-
նի համարել ժամացույցին: Հենց որ Դեւլան տե-
սավ այն, հասկացավ, որ դա պետք է պատկանի
Զիմին: Շղթայիկը նույնպիսին էր, ինչպես ինքը
Զիմը: Համեստութիւնն ու արժանիք՝ այդ հատ-
կանիշները բնորոշ էին երկուսի համար էլ: Հարկ
եղավ քսանմեկ դոլար մուծել զրամարկը, և
Դեւլան շտապեց դեպի տուն, գրպանում ունենա-
լով ութսունյոթ սենթ: Աչգպիսի շղթայով Զիմի
համար ամոթալի չի լինի ուղածդ հասարակութեան
մեջ հետաքրքրվել, թե ժամը քանիսն է: Որքան
էլ հոյակապ էր ժամացույցը, բայց նա հաճախ
զողունի էր նայում նրան, որովհետև այն քարշ էր
տված մի անպետք կաշվե փողկով:

Տանը Դեւլայի աշխուժութիւնն անցավ, իր տե-
ղը դիջելով շրջահայեցութեանն ու հաշվենկատու-
թեանը: Նա վերցրեց մագերը գանգրացնելու ունե-

լին, գազը վառեց և սկսեց ուղղել այն ավերածու-
թիւնները, որ պատճառել էին մեծահոգութիւնը
սիրո հետ միասին: Իսկ դա միշտ էլ ծանրագույն
աշխատանք է, բարեկամներս, վիթխարի աշխա-
տանք:

Քառասուն րոպե էլ չէր անցել, ինչ նրա գլու-
խը ծածկվեց պիրկ ոլորած մանր խոպոպիկներով,
որով նա զարմանալիորեն նմանվեց դասերից փա-
խած տղայի: Նա իրեն հայելու մեջ նայեց մի եր-
կար, ուշադիր և քննական հայացքով:

«Դե,— ասաց նա ինքն իրեն,— եթե Զիմը նա-
յելուն պես ինձ չսպանի, կմտածի, որ ես նման
եմ Կոնի-Ալլենզցի խմբերգչուհու: Բայց դե ես ի՞նչ
կարող էի անել, ա՛խ, ի՞նչ կարող էի անել, քանի
որ ունեցած-չունեցածս միայն մեկ դոլար ութ-
սունյոթ սենթ էր»:

Ժամը յոթին սուրճը պատրաստ էր, և թավան
զրված էր գազօջախին, սպասելով ոչխարի մսից
պատրաստված կոտլետներին:

Զիմը երբեք չէր ուշանում: Դեւլան պլատինե
շղթան սեղմեց ափի մեջ ու նստեց սեղանի ծայ-
րին, ավելի մոտ մուտքի դռանը: Շուտով նա ներ-
քեց, աստիճանների վրայից, լսեց Զիմի ոտնա-
ձայնը և մի ակնթարթում զունատվեց: Նա սովո-
րութիւնն ուներ առօրյա ամեն տեսակ մանրուք-
ների առիթով կարճ աղոթքներով դիմելու աստ-
ծուն, ուստի արագ-արագ շշնջաց.

— Տեր աստված, այնպես արա, որ ես շարունակեմ դուր գալ նրան:

Դուրք բացվեց, ներս մտավ Ջիմը և դուռը փակեց իր ետևից: Նա նիհար, մտահոգ դեմք ուներ: Հեշտ չէ քսաներկու տարեկան հասակում ծանրաբեռնված լինել ընտանիքով: Վաղուց արդեն նա նոր վերարկուի կարիք ուներ, և ձեռքերն էլ մրսում էին առանց ձեռնոցի:

Ջիմն անշարժ քարացավ դռների մոտ, ինչպես լորի հոտ առած անդլիական քերձի: Նրա աչքերը քարացան Դիլլայի վրա մի արտահայտությամբ, որ սա հասկանալ չէր կարող: Դիլլան սարսափեց: Դա ոչ բարկություն էր, ոչ զարմանք, ոչ հանդիմանություն, ոչ վախ՝ ոչ մեկն այն զգացումներից, որին կարելի էր սպասել: Նա պարզապես նայում էր կնոջն առանց հայացքը կտրելու, և նրա դեմքի տարօրինակ արտահայտությունը չէր փոխվում:

Դիլլան ցած թռավ սեղանից ու նետվեց դեպի նա:

— Ջիմ, սիրելիս,— գոչեց նա,— այդպես մի նայիր ինձ: Ես կտրել տվի մազերս ու վաճառեցի, որովհետև չէի դիմանա, եթե ծնունդին մի բան շունենայի քեզ նվիրելու: Նրանք նորից կաճեն: Դու չես բարկանում, այնպես չէ՞: Ես այլ կերպ չէի կարող: Իմ մազերը շատ շուտ են հրկարում: Դե, շնորհավորիր ինձ ծննդյան առթիվ, Ջիմ, և արի ուրախանանք տոնին: Թե իմանաս՝ ինչպիսիք նվեր

եմ պատրաստել քեզ համար, ինչ հոյակապ, հրաշալի նվեր:

— Դու մազերդ կտրե՞լ ես,— հարցրեց Ջիմն այնպիսի լարվածությամբ, ասես, հակառակ ուղեղի եռանդուն աշխատանքին, դեռևս չէր կարողանում գիտակցել այդ փաստը:

— Այո, կտրել տվի ու վաճառեցի,— ասաց Դիլլան:— Բայց միևնույնն է, դու ինձ կսիրես անշուշտ: Ձե՞ որ ես էլի նույնն եմ, թեկուզև կարճ մազերով:

Ջիմը տարակուսանքով աչք ածեց սենյակը:

— Այդպես, ուրեմն, քո հյուսերն այլևս չկա՞ն,— հարցրեց նա անմիտ համառությամբ:

— Մի՛ փնտրիր, այլևս չես գտնի,— ասաց Դիլլան:— Ախր ասում եմ քեզ՝ վաճառեցի, կտրել տվի ու վաճառեցի: Այսօր թաթախման երեկոն է, Ջիմ: Մի քիչ ավելի սիրալիք եղիր ինձ հետ, որովհետև ես այդ քեզ համար արի: Միգուցե գլխիս մազերը կարելի է հաշվել,— շարունակեց նա, և նրա քնքուշ ձայնը հանկարծ լրջացավ,— բայց ո՛չ ոք, ո՛չ ոք չի կարող չափել իմ սերը քո նկատմամբ: Կոտլետը տապակե՞մ, Ջիմ:

Եվ Ջիմը դուրս եկավ ընդարմացումից: Նա գիրկն առավ իր Դիլլային: Համեստ լինենք և մի քանի վայրկյան զբաղվենք որևէ կողմնակի բանով: Ո՞րն է շատ՝ շաբաթական ութ դոլա՞րը, թե՞ տարեկան մեկ միլիոնը: Մաթեմատիկոսը կամ իմաստունը սխալ պատասխան կտան ձեզ: Մոգե-

րը թանկագին նվերներ էին բերել, բայց նրանց միջից պակասում էր մեկը: Սակայն այս մշուշապատ ակնարկները կպարզվեն քիչ հետո:

Ջիմը վերարկուի գրպանից մի փաթեթ հանեց ու նետեց սեղանի վրա:

— Սխալ մի հասկանա ինձ, Դեյլ,— ասաց նա:— Ոչ մի սանրվածք ու մազերի խուզում չեն կարող ստիպել ինձ շտիրելու իմ աղջկան: Սակայն բաց արա այդ ծրարը, և դու կհասկանաս, թե ինչու մի պահ ես փոքր-ինչ շփոթվեցի:

Ճերմակ, ժիր մատները կտրատեցին թելերն ու թուղթը: Հաջորդեց հիացմունքի մի բացականչություն, որը, ավա՜ղ, անմիջապես էլ զուտ կանացիորեն փոխարկվեց արցունքի հեղեղի ու հառաչանքների, այնպես որ պահանջվեց անհասկացող գործի դնել տանտիրոջ տրամադրության տակ գտնվող բոլոր հանգստացուցիչ միջոցները:

Քանզի սեղանին ընկած էին սանրեր, սանրերի հենց այն շարքը,— մեկը՝ ետևի, երկուսը՝ կողքերի համար,— որոնցով Դեյլան արդեն շատ անգամ էր ակնածանքով հիացել թրողվելի ցուցափեղկերից մեկում: Հիանալի սանրեր, իսկական կրիայի ոսկրից, ծայրերին ազուցված փայլուն քարերով, և իսկը հարմար նրա շագանակագույն մազերին: Սանրերը թանկ արժեին, Դեյլան գիտեր, և նրա սիրտը երկար նվազում էր ու տանջվում դրանց տիրանալու անիրականանալի ցանկությունից: Եվ ահա այժմ սանրերը պատկանում են

իրեն, բայց չկան այլևս այն հրաշալի հյուսերը, որոնք կզարդարեին դրանց ցանկալի փայլը:

Բայց և այնպես նա սանրերը սեղմեց սրտին և, երբ վերջապես ուժ գտավ իր մեջ գլուխը բարձրացնելու և ժպտալու արցունքների միջից, ասաց.

— Իմ մազերը շատ շուտ են երկարում, Ջիմ:

Այստեղ հանկարծ նա վեր թռավ տեղից, ինչպես վրան եռման ջուր լցրած կատվի ձագ, և բացականչեց.

— Ա՛խ, տեր իմ աստված:

Չէ՞ որ Ջիմը դեռ չէր տեսել նրա հիանալի նվերը: Նա շտապով նրան պարզեց բաց ափի մեջ դրած շղթան: Փայլատ, ազնիվ մետաղը, ասես, շողշողաց նրա բուռն և անկեղծ ուրախության ճանշներում:

— Մի՞թե սա հրաշալիք չէ, Ջիմ: Ամբողջ քաղաքը ոտքի տակ տվի, մինչև գտա: Հիմա կարող ես օրը թեկուզ հարյուր անգամ նայել, թե ժամը քանիսն է: Հասկա տուր ժամացույցդ: Ուզում եմ տեսնել, թե բոլորը միասին ինչպես կերևա:

Բայց Ջիմը, փոխանակ նրան լսելու, պառկեց օթոցին, ձեռքերը զրեց զլիսատակն ու ժպտաց:

— Դեյլ,— ասաց նա,— հարկ կլինի առայժմ պահել մեր նվերները, թող մի քիչ մնան այդպես: Դրանք հիմա շափազանց լավն են մեզ համար: Ժամացույցը ես վաճառեցի, որ սանրեր գնեմ: Իսկ հիմա, թերևս, հենց կոտլետ տապակելու ժամանակն է:

Ինչպես հայտնի է, մոգերը, որոնք նվերներ բերին մսուրում ծնված մանկանը, իմաստուն, զարմանալի իմաստուն մարդիկ էին: Հենց նրանք էլ մոգա դարձրին ծննդյան նվերներ տալը: Եվ քանի որ նրանք իմաստուն էին, ասպա նրանց նվերներն էլ էին իմաստուն, մինչև իսկ թերևս անպետքության դեպքում մեկ ուրիշ իրով փոխարինելու վերապահված իրավունքով: Իսկ ես այստեղ պատմեցի ձեզ ոչնչով աչքի չընկնող մի պատմություն ութ դոլարանոց բնակարանի երկու խենթ մանուկների մասին, որոնք ամենամանկամաստուն ձևով իրար համար զոհաբերեցին իրենց մեծագույն գանձերը: Սակայն թող թույլ տրվի ասելու ի խրատ մեր օրերի իմաստունների, որ բոլոր նվիրաբերողներից այդ երկուսը ամենամաստուններն էին: Բոլոր նրանցից, ովքեր նվերներ են տալիս և ընդունում, իսկապես իմաստուն են միայն այս երկուսի նմանները: Ամեն տեղ և ամենուրեք: Մոգերն էլ հենց դրանք են որ կան:

ՓԱՐԱՎՈՆԸ ԵՎ ԽՈՐԱԼԸ

Սուպին շուտամուռ եկավ Մեդիսոն-պուրակի նըստարանի վրա: Երբ գիշերները վայրի սագերի երամները ձգվում են բարձր երկնքում, երբ ծովաբեկուց մանտո շունեցող կանայք սիրալիք են դառնում իրենց ամուսինների հետ, երբ Սուպին սկսում է շուտամուռ գալ զբոսայգու իր նստարանին, դա նշանակում է, որ ձմեռը մոտ է:

Գիշին մի տերև ընկավ Սուպիի ծնկներին: Դա Ձմեռ պապի այցեբարտն էր. այդ ծերուկը բարի է Մեդիսոն-պուրակի մշտական բնակիչների նըկատմամբ և աղնվորեն նախազգուշացնում է նըրանց իր մոտալուտ գալստյան առթիվ: Չորս փողոցների խաչմերուկում նա իր այցեբարտերը հանձնում է Հյուսիսային քամուն, «Բաց երկնքի տակ» հյուրանոցի բարապանին, որպեսզի նրա բնակիչները պատրաստվեն:

Սուպին հասկացավ, որ հասել է մեծ-մեծակ իր անձր վերահաս ցրտերից պաշտպանելու միջոցներ և ուղիներ որոնող կոմիտե ստեղծելու ժամը: Դրա համար էլ նա շուտամուռ եկավ իր նստարանին:

Սոսիի ձմեռային պլաններն առանձնապես փառամուլ չէին: Նա չէր երազում ոչ հարավի երկրներ, ոչ էլ զբոսանավով Միջերկրական ծովում լողալու մասին՝ Նեապոլի ծոցում կանգ առնելու հետ մեկտեղ: Եռամսյա բանտարկություն Կրզզում՝,— ահա թե ինչի էր ծարավի նրա հոգին: Երեք ամիս ապահով պատասպարան և ուտելիք հաճելի ընկերության մեջ, հեռու Բորնի² և փարավոնների ոտնձգություններից՝ Սոսիի համար դա իրոք որ ամենամեծ ցանկությունն էր:

Արդեն մի քանի տարի է, ինչ Կրզզու հյուրընկալ բանտը ծառայում էր նրան իբրև ձմեռային կացարան: Ինչպես որ նրա ավելի երջանիկ համաքաղաքացիները տոմս էին գնում Յուրիզայի կամ Ռիվյերայի համար, այդպես էլ Սոսիին ոչ բարդ նախապատրաստություններ էր տեսնում դեպի Կրզզի կատարելիք ամենամյա ուխտագնացություն: Եվ այժմ հասել էր այդ ժամը:

Անցած գիշեր երեք կիրակնօրյա թերթերը, որ նա հմտորեն բաժանեց,— մեկը՝ բաճկոնի տակ, մյուսով փաթաթեց ոտքերը, երրորդով՝ ծնկները.— ցրտից չպաշտպանեցին նրան. նա խիստ անհանգիստ մի գիշեր անցկացրեց շատրվանի մոտ դրված իր նստարանին: Այնպես որ Կրզզին


¹ Քրեզուեզու Կրզզին Նյու-Յորքի և Բրուքլինի միջև ընկած ծոցում, ուր դրվում են բանտը, հիվանդանոցը և խելագարների տունը:

² Հյուսիսային սառը քաղի:

33898

պատկերվում էր նրան ցանկալի և լիովին պատեհ ժամի ապաստարան: Սոսին արհամարհում էր այն ջանքերը, որ շապյում էին քաղաքի աղքատների համար հանուն ողորմածության: Նրա կարծիքով օրենքն ավելի ողորմած էր, քան մարգասիրությունը: Քաղաքում կային անթիվ անհամար հասարակական և մասնավոր բարեգործական հաստատություններ, որտեղ նա կարող էր իր համեստ պահանջներին համապատասխան սնունդ և կացարան ստանալ: Բայց Սոսիի հպարտ հոգու համար բարեգործության նվերները ճնշել էին: Մարգասիրների ձեռքից ստացած ամեն մի բարեբարություն համար հարկ էր վճարել եթե ոչ դրամով, քայա նվաստացմամբ: Ինչպես Կեսարի մոտ կար իրուտոս՝ այնպես էլ այստեղ յուրաքանչյուր բարեգործական մահճակալ կցորդված էր պարտադիր վաննայի հետ, իսկ հացի ամեն մի պատուր թունավորված էր հոգուդ մեջ անպատկառ սողոսկումով: Ավելի լավ չէ՞ բանտի կենվոր լինել: Այնտեղ, իհարկե, ամեն ինչ կատարվում է խստիկ սահմանված կանոններով, բայց դրա փոխարեն ոչ ոք չի խցկվում ջենտլմենի անձնական գործերում:

Ուտի, որոշելով ձմռան սեզոնին մեկնել Կրզզի, Սոսին անմիջապես անցավ իր պլանի կենսագործմանը: Բանտ տանող ուղիները շատ էին ու հեշտ: Ամենահաճելի ճամփան անցնում էր քստորանի միջով: Դուք մի լավ քստորանում ճան



ճաշ եք պատվիրում, ուտում եք մինչև տրաքվելը, ապա հայտարարում ձեզ անվճարունակ: Առանց որևէ սկանդալի ձեզ հանձնում են ոստիկանի ձեռքը: Դատավորն ավարտում է այդ բարի գործը:

Սուպին վեր կացավ և, դուրս գալով դրոսայգուց, քայլեց ասֆալտե ծովով, որը կազմվում է Բրոդվեյի և Հինգերորդ ավենյուի միախառնումից: Այստեղ նա կանգ առավ լույսերով ողողված սրբաբանի մոտ, ուր երեկոները կենտրոնանում է այն ամեն լավագույնը, որ կարող են տալ խաղողի վազը, շերամի որդը և պրոտոպլազման:

Սուպին հավատում էր իրեն՝ բաճկոնի ներքևի կոճակից մինչև վերև: Նա մաքուր սափրված էր, հագի բաճկոնը վայելուչ էր, գեղեցիկ սև թիթեռնիկաձև փողկապը մի միսիոներուհի էր նվիրել Բարերարության օրը¹: Եթե նրան հաջողվեր աննկատ հասնել սեղանին, հաջողությունն ապահովված էր: Նրա անձի այն մասը, որը կբարձրանա սեղանից վեր, մատուցողի մեջ ոչ մի կասկած չի հարուցի: Տապակած բադ, մտածեց Սուպին, հետո էլ մի շիշ շարի: Ապա՝ պանիր, մի բաժակ սև սուրճ ու սիգար: Մեկդուլարանոց սիգարն իսկը

¹ Բարերարության օր—ամերիկյան պաշտոնական տոն, որը մտցվել է Նոր Անգլիայի վաղ գաղութարարների կողմից ի նշանավորումն Նոր Աշխարհում հավաքած առաջին բերրի (նույն բերրի վերջին հինգշաբթի օրը):

հարմար է: Հաշիվն այնքան էլ մեծ չի լինի, որպեսզի դրդի սրճարանի վարչությանը վրեժխընդրության առանձնապես դաժան ակտերի դիմելու, իսկ ինքը, ճաշելով այդ կերպ, հաճույքով կսկսի ճամփորդությունը դեպի իր ձմեռային կացարանը:

Բայց հենց որ Սուպին ոտքը ռեստորանի շեմքից ներս դրեց, մեարդոտելի փորձված աչքն իսկույն նկատեց նրա մաշված շալվարն ու ծամված կոշիկները: Ուժեղ, ճարպիկ ձեռքերը արագ շուտ տվին նրան և անաղմուկ դուրս մղեցին ասֆալտի վրա, այդպիսով աղատելով բաղին նրա համար պատրաստվող տխուր ճակատագրից:

Սուպին դուրս եկավ Բրոդվեյից: Ըստ երևույթին կղզի տանող ճամփան ցանված չի լինի վարդերով: Ինչ արած: Պետք է դրախտ մտնելու մի այլ եղանակ մտածել:

Վեցերորդ ավենյուի անկյունում անցորդների ուշադրությունը գրավում էին ցուցափեղկի լույսերը և վարպետորեն դասավորված ապրանքները: Սուպին մի կոպիճ առավ ու նետեց ցուցափեղկի ապակուն: Փողոցի անկյան ետևից սկսեցին վազելով մարդիկ հավաքվել: Բոլորի առջևից սլանում էր ոստիկանը: Սուպին կանգնել էր ձեռքերը գրպանները դրած և ժպտում էր դիմացից մոտեցող պղնձե փայլուն կոճակներին:

— Ո՞վ արավ, — շտապ հարցրեց ոստիկանը:

— Իսկ դուք չե՞ք կարծում, որ այստեղ խառն է իմ մատը, — հարցրեց Սուպին ոչ առանց սար-

կազմի, բայց սիրալիր, իբրև մի մարդ, որը ող-
ջունում է մի մեծ հաջողութուն:

Ոստիկանը շուրջ Սոպիին նույնիսկ իբրև հի-
պոթեզ ընդունել: Խանութների փեղկերը քարերով
ջարդող մարդիկ օրենքի ներկայացուցիչների հետ
բանակցություններ շնն վարում: Նրանք ճշում են:
Ոստիկանը նկատեց մի մարդ, որը կես թաղամաս
հեռվում վազում էր տրամվային հասնելու: Նա
բարձրացրեց մահակը և սլացավ նրա ետևից:
Սոպին գարշանքի զգացումը սրտում շարունակեց
իր ճամփան... Երկրորդ անհաջողությունը:

Փողոցի հակառակ կողմում մի համեստ ռես-
տորան կար, որը նախատեսված էր մեծ ախոր-
ժակների և պարապ քսակների համար: Այդտեղ
ամանեղենն ու օդը ծանր էին, սփռոցներն ու սու-
պերը՝ ջրալի, թափանցիկ: Սոպին իր դատապար-
տելի կոշիկներն ու պերճախոս շալվարը անարգել
ներս տարավ այդ ստամոքսի տաճարը: Նա նըս-
տեց փոքրիկ սեղանի մոտ և կուլ տվեց մի բաժին
բիֆշտեքս, մի բաժին յուղաբլիթ և մի քանի կար-
կանդակ: Ապա հայտնեց ռեստորանի ծառային,
որ ինքը՝ Սոպին, և ամենամանր նիկելադրամը ոչ
մի ընդհանուր բան չունեն իրար հետ:

— Գե, իսկ հիմա շտապեցեք,— ասաց Սո-
պին:— Կանչեցեք փարավոնին: Բարի եղբք, շարժ-
վեցեք տեղներիցդ, մի՛ ստիպեք ջենտլմենին սպա-
սելու:

— Առանց փարավոնի էլ յուր կգնաս,—

ասաց մատուցողը կաթնահունց բուլկու պես փա-
փուկ ձայնով և ուրախ փայլեցրեց աչքերը, որոնք
նման էին կոկտեյլի միջի բալերի:— Է՛յ, Կո՛ն,
օգնիր:

Երկու մատուցողները բարեխղճորեն Սոպիին
պառկեցրին անզգա մայթի վրա, ահանջը ներքև:
Նա վեր կացավ տեղից հող առ հող, ինչպես հյուս-
նի ծալովի քանոն, և սկսեց թափ տալ հագուստի
փոշին: Ձերբակալությունն սկսեց նրան ծիածա-
նագույն երազ թվալ, Կղզին՝ հեռավոր միրաժ:
Երկու տուն այն կողմ կանգնած ոստիկանը ծիծա-
ղեց ու շարունակեց քայլել:

Հինգ թաղամաս անցավ Սոպին, մինչև որ
սիրտ արավ նորից բախտը փորձելու: Այս անգամ
ուղղակի հոյակապ առիթ ներկայացավ: Մի ջա՛լ
կին, համեստ ու ճաշակով հագնված, կանգնել էլ
խանութի ցուցափեղկի առաջ և աշխույժ հետա-
բերքություն մը դիտում էր սափրվելու և թանաքի
փոքրիկ թասերը, իսկ նրանից երկու քայլի վրա,
հենված հրշեջ ծորակին, կանգնել էր մի հաղթան-
դամ, խտտադեմ ոստիկան:

Սոպին որոշեց խաղալ արգահատելի և բոլո-
րից արհամարհված փողոցային լուվելասի դերը:
Նշված զոհի կանոնավոր արտաքինը և պատկա-
ռազու փարավոնի մոտիկությունը հաստատ հիմ-
քեր էին տալիս հուսալու, որ շուտով նա կզգա իր
ուսին ոստիկանության ծանր ձեռքը և ձմեռն ապա-
հովված կլինի հարմարավետ կղզում:

Սոսիին ուղղեց միսիոններուհոռ ճվիրած փողկապը, լույս աշխարհ հանեց իր անհնազանդ մանժետները, շլյապան կտրճորեն թեքեց մի կողմի վրա և քայլեց ուղիղ դեպի ջահել կինը: Նա անպատկառորեն աչքով արավ նրան, կոնչաց, ժըպտաց, կոկորդը մաքրեց, մի խոսքով՝ լկտիաբար գործի դրեց փողոցային հետամտողի բոլոր կլասիկական հնարները: Աչքի պոշով Սոսիին տեսավ, որ ոստիկանն ուշադիր հետևում է իրեն: Ջահել կինը մի քանի քայլ հեռացավ և նորից անձնատուր եղավ սափրվելու թասիկներ զննելուն: Սոսիին հետևեց նրան, անպատկառորեն կանգնեց նրա կողքին և, շլյապան բարձրացնելով, ասաց.

— Ա՛խ, ի՞նչ լավիկն եք դուք: Չղբոսնե՞նք:

Ռոստիկանը շարունակում էր դիտել նրանց: Բավական է վիրավորված ջահել կինը մատը վեր բարձրացնեն, և Սոսիին արդեն ճամփա կրնկներ դեպի խաղաղ հանգրվան: Նրան թվում էր արդեն, որ զգում է ոստիկանատան ջերմությունն ու հարմարավետությունը: Ջահել կինը շուտ եկավ դեպի Սոսիին և, ձեռքը պարզելով, բռնեց նրա թևքից:

— Հաճույքով, Մայիկ,— ասաց նա ուրախ:— Գարեջուր կհյուրասիրե՞ս: Ծս ավելի շուտ կխոսեսի քեզ հետ, բայց փարավոնը հետևում էր:

Ջահել կինը փաթաթվեց Սոսիին, ինչպես բաղնիք կաղնուհ, և կնոջը թեանցուկ արած, նա մոսյլորեն ընթացավ կարգուկանոնի պահապանի

կողքով: Սոսիին հաստատապես գատապարտված էր ազատություն վայելելու:

Մոտակա փողոցում նա թոթափեց իր ուղեկցուհուն և փախուստի դիմեց: Կանգ առավ ռեկլամի լույսերով ողողված մի թաղամասում, որտեղ և՛ սրտերը, և՛ հաղթանակները, և՛ երաժշտությունը միատեսակ թեթև են: Մուշտակ հազած կանայք և տաք վերարկուով տղամարդիկ ուրախ գրուցում էին ցուրտ քամու առաջ: Անակնկալ երկյուղը համակեց Սոսիին: Միզուցե ինչ-որ շար կախարդանք ոստիկանության համար անխոցելի է դարձրել նրան: Քիչ էր մնում խուճապի մատնրվեր: Հասնելով ոստիկանին, որը վեհապանծորեն կանգնած էր թատրոնի լուսավորված շքամուտքի մոտ, նա որոշեց կառչել «հասարակական վայրում» խուլիգանություն ձեռնից:

Խոստում ձայնի ողջ ուժով Սոսիին ինչ-որ հարբած երգ վեր քաշեց: Նա սկսեց պարել մայթի վրա, բղավել, ծոմովել՝ ամեն կերպ խանգարելով հանգիստը:

Ռոստիկանը ոլորեց իր մահակը, մեջքը շուտով սկանդալիստի կողմը և նկատեց մի անցորդի:

— Ելսկցի ուսանող է: Նրանք այսօր տոնում են Հարֆորդի քուլիջի ֆուտբոլիստների դեմ իրենց տարած հաղթանակը: Աղմկում են, անշուշտ, բայց դա անվտանգ է: Մեզ հրահանգել են ձեռք չտալ դրանց:

Անմխիթար Սոսլին դադարեցրեց իր ողորմելի հրավառությունը: Մի՞թե այդպես էլ ոչ մի ոստիկան չի բռնելու նրա օձիքից: Կղզու բանտն սկսեց նրան թվալ անմատչելի Արկադիա: Նա ավելի պինդ կռճկեց իր թեթև բաճկոնը. քամին մարմինը կտրում էր:

Միախոտի կրպակում նա տեսավ մի պարոնի, որ գազի կերոնից սիգարն էր կպցնում: Նա իր մետաքսե անձրևանոցը թողել էր մուտքի մոտ: Սոսլին անցավ շեմքը, անձրևանոցը վերցրեց և սկսեց դանդաղ հեռանալ: Միգարով մարդը արագ հետևեց նրան:

— Այդ անձրևանոցը իմն է,— խստությամբ ասաց նա:

— Մի՞թե,— լկտիորեն քմծիծաղեց Սոսլին, մանր գողտթյանը ավելացնելով նաև վիրավորանքը:— Ուրեմն, ինչո՞ւ ոստիկան չեք կանչում: Այո, ես վերցրի ձեր անձրևանոցը: Դե, կանչեցիք փարավոնին: Ահա նա կանգնած է անկյունում:

Անձրևանոցի տերը քայլերը դանդաղեցրեց: Սոսլին նույնպես: Նա արգեն կանխազգում էր, որ ճակատագիրը նորից զզվելի խաղ է խաղալու իր հետ: Ոստիկանը հետաքրքրությամբ հետևում էր նրանց:

— Անշուշտ,— ասաց սիգարով մարդը,— իհարկե... դուք... մի խոսքով, այդպիսի սխալներ պատահում են... ես... եթե դա ձեր անձրևանոցն է... հուսով եմ, կներեք ինձ... ես այն վերցրի այս

առավոտ, ռեստորանում... եթե դուք ճանաչեցիք, որ ձերն է... դե ինչ... հուսով եմ, որ դուք...

— Իհարկե, սա ի՞մ անձրևանոցն է,— բարկացած ասաց Սոսլին:

Անձրևանոցի նախկին տերը նահանջեց: Իսկ ոստիկանը նետվեց օգնելու բարձրահասակ, շիկահեր, շքեղ մանտո հագած մի կնոջ. անհրաժեշտ էր նրան փողոցն անցկացնել, որովհետև երկու թաղամաս հեռվից երևաց տրամվայը:

Նորոգման պատճառով այլանդակված փողոցով Սոսլին ծովեց դեպի արևելք: Նա անձրևանոցը շարությամբ շարտեց փոսի մեջ, անեծքներ տեղալով սաղավարտակիր, մահակավոր մարդկանց հասցեին: Այնպես է ուզում նրանց ճանկն ընկնել, իսկ նրանք նայում են իրեն, ինչպես անսխալական Հոտմի պապի:

Վերջապես, Սոսլին հասավ հեռավոր ավենյուններից մեկը, որտեղ համարյա աղմուկ-իրարանցում չէր լսվում, և ուղղություն վերցրեց դեպի Մեդիսոն-պուրակ: Քանզի բնազդը, որ մարդուն մըղում է դեպի հարազատ տունը, չի մեռնում նույն-իսկ այն ժամանակ, երբ այդ տունը զբոսայգու նստարանն է:

Առանձնապես խաղաղ մի անկյունում Սոսլին հանկարծ կանգ առավ: Այդտեղ սրածայր տանիքով մի հին եկեղեցի կար: Նրա պատուհաններից մեկի մանուշակագույն ապակիների միջից մեղմ լույս էր կաթում: Հավանորեն, երգեհոնահարը մնացել

էր իր գործիքի մտա, որպեսզի նվազի կիրակնօրյա խորալը, որովհետև երաժշտութեան քաղցր հրնչունները հասան Սոպիի ականջին, և նա քարացավ տեղում, սեղմվելով շուգունի ցանկապատի ոլորազարդերին:

Կուսինը ծագեց՝ պայծառ ու անխռով: Կառքերն ու անցորդները հազվագեպ էին. քիվերի տակ քնկոտ մնչում էին ազավները, թվում էր, թե գտնվում ես գլուղական գերեզմանատանը: Եվ խորալը, որ նվագում էր երգեհոնահարը, Սոպիին մեխել էր շուգունի ցանկապատին, որովհետև նա այդ եղանակը շատ անգամներ էր լսել առաջ՝ այն օրերին, երբ նրա կյանքում կային մայրը, վարդերը, համարձակ ծրագրերը, բարեկամները, և մաքուր մտքերը, և մաքուր օձիքները:

Հին եկեղեցու պատուհանից հոսող երաժշտութեան աղդեցութեամբ Սոպիի հոգում մի անակնկալ ու հրաշալի փոփոխություն կատարվեց: Նա սարսափով նկատեց այն անդունդը, ուր ընկել էր, տեսավ այն ամոթալի օրերը, անարժան ցանկությունները, մեռած հույսերը, խորտակված ընդունակություններն ու ստոր հակումները, որոնցից կազմված էր իր կյանքը:

Եվ նրա սիրտը բաբախեց այդ նոր տրամադրությունը ներդաշնակ: Հանկարծ շար ճակատագրի դեմ պայքարելու ուժ զգաց իր մեջ: Նա դուրս կարձնի կեղտի միջից, նորից մարդ կդառնա, նա կհաղթի այն շարիքը, որը նրան իր գերին դարձ-

րեց: Ժամանակը դեռ չի անցել, նա դեռ համեմատաբար ջահել է: Նա հարութուն կտա նախկին փառասեր երազանքներին և եռանդով ձեռք կզարկի դրանց կենսագործմանը: Երգեհոնի հանդիսավոր, քաղցր հնչունները հեղաշրջում առաջացրին նրա մեջ: Վաղն առավոտյան նա կգնա քաղաքի գործարար մասը և աշխատանք կփնտրի իր համար: Մեկ անգամ մի մորթավաճառ բեռնատարի տեղ առաջարկեց նրան: Հենց վաղը կգտնի այդ մարդուն և կխնդրի այդ աշխատանքը: Նա ուզում է մարդ լինել: Նա...

Սոպին զգաց, թե ինչպես մեկի ձեռքն իջավ իր ուսին: Արագ ետ նայեց ու տեսավ իր առաջ ուտիկանի լայն դեմքը:

— Ի՞նչ եք անում այստեղ,— հարցրեց ուտիկանը:

— Ոչինչ,— պատասխանեց Սոպին:

— Այդ դեպքում գնանք,— ասաց ուտիկանը:

— Կղզի, երեք ամսով,— որոշեց դատավորը հետևյալ առավոտյան:

ՎԵՐՋԻՆ ՏԵՐԵՎՐ

Վաշինգտոն-պուրակից արևմուտք ընկած փոքրիկ թաղամասում փողոցները խառնվում ու կտրատվում են, վերածվելով կարճ շերտիկների, որոնք կոչվում են անցուղիներ: Այդ անցուղիները կազմում են տարօրինակ անկյուններ և ծուռտիկ գծեր: Այնտեղ մի փողոց նույնիսկ երկու անգամ հատում է ինքն իրեն: Ոման նկարչի հաջողվեց հայտնագործել այդ փողոցի հույժ արժեքավոր հատկությունը: Ենթադրենք, թե խանութի աշխատողը ներկի, թղթի և կտավի պարտքերի ցուցակը ձեռքին հանդիպում է այնտեղ ինքն իրեն տուն վերադառնալիս, առանց մեկ սենթ անգամ ստանալու պարտապաններդ:

Եվ ահա արվեստի մարդիկ պատահաբար ընկան Գրինվիլ-Վիլիջ յուրօրինակ թաղամասը, փնտրելով դեպի հյուսիս նայող պատուհաններ, XVIII դարի տանիքներ, հուլանդական ձեղնասենյակներ և էժան սենյակի վարձ: Ապա նրանք Վեցերորդ ավենյուից այստեղ բերին մի քանի անա-

գե գավաթներ, մեկ-երկու կրակարան և հիմնեցին իրենց «գաղութը»:

Սյուրի և Ջոնսիի ստուդիան գտնվում էր մի աղյուսե եռահարկ տան վերևում: Ջոնսին Ջոաննա անվան կրճատ ձևն էր: Նրանցից մեկը եկել էր Մեյն նահանգից, մյուսը՝ Կալիֆորնիայից: Նրանք ծանոթացել էին Ութերորդ փողոցի մի փոքրիկ ռեստորանում, ընդհանուր սեղանի մոտ, և գտել էին, որ իրենց հայացքները արվեստի, եղերդակի սալաթի և մողաիկ թեքերի մասին լիովին համընկնում են: Դրա հետևանքով կազմվեց ընդհանուր ստուդիան:

Դա մայիսին էր: Նոյեմբերին անհամբույր այն օտարականը, որին բժիշկներն անվանում են Պեկմոնիա, անտեսանելիորեն անցավ գաղութով, իր սառցե մատները զիպցնելով մերթ մեկին, մերթ մյուսին: Արևելյան թաղով այդ հոգեառը քայլում էր համարձակ, հարվածելով տասնյակ զոհերի, բայց այստեղ, մամռածածկ նեղ փողոցների լարերին թոտում, նա քարշ էր գալիս քայլ առ քայլ:

Պարոն Պեկմոնիային ոչ մի կերպ չէր կարելի նրրակիրթ ծեր ջենտլմեն համարել: Վտխտ աղջիկը, որ Կալիֆորնիայի զեփյուտից արյան պակասություն ուներ, հազիվ թե արժանի հակառակորդ համարվեր կարմիր, մեծ բոռնցքներով ու շնչարգելությամբ տառապող պնդակազմ ծեր բթամիտին: Սակայն նա ցած գլորեց աղջկան, և Ջոնսին, անշարժ պառկած երկաթե ներկած մահճակալի

վրա, հոլանդական պատուհանի մանրահյուս
ապակիներին միջից նայում էր հարեան աղյուսե
տան խուլ պարապությանը:

Մի անգամ առավոտյան մտահոգ բժիշկը մի-
այն թավամազ, ճերմակ հոնքերի շարժումով
Սյուրին կանչեց միջանցք:

— Նա մեկ շանս ունի... դե, ասենք, տասի
դիմաց,— ասաց նա, ջերմաչափը թափ տալով:—
Այն էլ՝ հիմե ինքը ցանկանա ապրել: Մեր ամբողջ
Քարմակոպեան կորցնում է իր իմաստը, երբ մար-
դիկ սկսում են գործել, ելնելով դագաղագործի
շահերից: Ձեր փոքրիկ օրիորդը որոշել է, որ ինքն
այլևս չի ապաքինվի: Ինչի՞ մասին է մտածում նա:

— Նա... նա ուզում էր ներկերով նկարել նեա-
պոլի ծոցը:

— Ներկերո՞վ: Դատարկ բա՛ն: Չունի՞ նա իր
հոգում մի այնպիսի բան, որի մասին իրոք արժեք
մտածել: Օրինակ, տղամարդիկ:

— Տղամարդի՞կ,— հարցրեց Սյուն, և նրա
ձայնը հնչեց խիստ, ինչպես շրթնահարմոնի
ձայնը:— Մի՞թե տղամարդիկ արժանի են... Ա՛խ,
ո՛չ, բժիշկ, ո՛չ մի այդպիսի բան չկա:

— Դե, այդ դեպքում նա ուղղակի հյուսվել
է,— որոշեց բժիշկը:— Ես կանամ այն ամենը, ինչ
ի վիճակի կլինեմ իրրև գիտության ներկայացու-
ցիչ: Բայց երբ իմ պացիենտն սկսում է հաշվել իր
թաղման թափորի կառքերը, ես դեղերի բուժիչ
հատկությունների հիստուն տոկոսը դեմ եմ նետում:

Եթե դուք հասնեք այն բանին, որ նա թեկուզ մեկ
անգամ հարցնի, թե ինչ ձևի թևք են հագնելու այս
ձմռանը, ես ձեզ երաշխավորում եմ, որ նա մեկ
շանս կունենա հինգից՝ տասի փոխարեն:

Բժշկի գնալուց հետո Սյուն ներս ընկավ ար-
վեստանոց և այնքան լաց եղավ, մինչև որ ճապո-
նական թղթե անձեռոցիկը բոլորովին ջուր կտրեց:
Ապա նա, գծագրական տախտակը ձեռքին, ռեզ-
տայմ սուլելով քաջաբար ներս մտավ Ջոնսի սե-
նյակը:

Ջոնսին պառկել էր, երեսը պատուհանի կողմը
դարձրած, հագիվ նշմարվելով վերմակների տա-
կից: Սյուն թողեց սուլելը, կարծելով, թե Ջոնսին
ընած է:

Նա հարմարեցրեց տախտակը և սկսեց տուշով
կատարել ժուռնալային պատմվածքի նկարագար-
դումները: Երիտասարդ նկարիչների համար Ար-
վեստի ճամփան սալարկվում է ժուռնալային
պատմվածքների նկարագարդումներով, պատմը-
վածքներ, որոնցով երիտասարդ հեղինակները սա-
լարկում են դեպի Գրականություն տանող իրենց
ուղին:

Ուրվագծելով պատմվածքի համար այդահոցի
կավքոյի ֆիգուրան՝ պերճաշուք բրիչներով, միակ-
նոցը աչքին, Սյուն կամացուկ մի շնչյուն լսեց,
որը կրկնվեց մի քանի անգամ: Նա շտապ մոտե-
ցավ մահճակալին: Ջոնսի աչքերը լայն բացված

էին: Նա նայում էր պատուհանին ու հաշվում հա-
կառակ հերթականութեամբ:

— Տասներկու, — ասաց նա, ապա քիչ հետո՝
«տասնմեկ», իսկ հետո՝ «տասը» և «ինը», իսկ
հետո՝ «ութ» և «յոթ» — համարյա միաժամանակ:

Սյուն նայեց պատուհանին: Ի՞նչ կար այնտեղ
հաշվելու: Երևում էր միայն դատարկ, արտում
բակը և քսան քայլի վրա՝ աղյուսե տան խուլ պա-
տը: Հանգուցավոր, արմատների մոտ փտած ծեր
բաղեղը մինչև կեսը ծածկել էր աղյուսե պատը:
Աշնան սառը շունչը տերևները պոկում էր վազից,
և ճյուղերի մերկացած կմախքները կառչում էին
ցած թափվող աղյուսներից:

— Ի՞նչ կա այնտեղ, սիրելիս, — հարցրեց Սյուն:

— Վեցը, — հազիվ լսելի պատասխանեց Ջոն-
սին: — Հիմա նրանք ավելի շուտ-շուտ են թռչում:
Երեք օր առաջ համարյա հարյուր հատ էին: Գլուխս
պտտվում էր հաշվելուց: Իսկ հիմա հեշտ է: Ահա,
մեկն էլ թռավ: Այժմ մնացին միայն հինգը:

— Ի՞նչ հինգ, սիրելիս: Ասա քո Սյուդիին:

— Տերևներ: Բաղեղի վրա: Երբ վերջին տերևն
ընկնի, ես կմեռնեմ: Արդեն երեք օր է՝ գիտեմ
այդ: Մի՞թե բժիշկը քեզ չասաց:

— Առաջին անգամ եմ նման հիմարութուն
լսում, — հոշակապ արհամարհանքով հարվածը ետ
վանեց Սյուն: — Ի՞նչ կապ կարող են ունենալ հի-
նավորք բաղեղի տերևները քո ապաքինվելու հետ:
Իսկ դու էլ դեռ այդպես սիրում էիր այդ բաղեղը,

անպիտա՞ն աղջիկ: Հիմարիկ մի լինի: Ախր հենց
այսօր առավոտյան էր՝ բժիշկն ասաց ինձ, որ դու
շուտով կառողջանաս... Սպասիր, ինչպե՞ս ասաց...
որ դու տասը շանս ունես մեկի դիմաց: Իսկ դա
չէ՞ որ ավելի քիչ չէ, քան մեզնից յուրաքանչյու-
րինը այստեղ, Նյու-Յորքում, երբ գնում ես տրամ-
վայով կամ անցնում նորահառույց տան մոտով:
Փորձիր մի քիչ մտաշուր խմել և թույլ տուր քո
Սյուդիին ավարտելու նկարը, որպեսզի նա կարո-
ղանա այն սաղացնել խմբազրի վրա և գինի առ-
նել իր հիվանդ աղջկա ու խողի կոտլետ՝ իր հա-
մար:

— Այլևս կարիք չկա, որ գինի առնես, — պա-
տասխանեց Ջոնսին, սեեռուն նայելով պատուհա-
նին: — Ահա, մեկն էլ թռավ: Չէ, մտաշուր չեմ ու-
զում: Ուրեմն, քնդամենը շորս հատ է մնում: Ես
ուզում եմ տեսնել, թե ինչպե՞ս է ընկնում վերջին
տերևը: Այն ժամանակ կմեռնեմ նաև ես:

— Ջոնսի, սիրելիս, — ասաց Սյուն, խոնարհ-
վելով նրա վրա, — խոստանո՞ւմ ես աչքերդ բաց
չանել ու չնայել պատուհանին, մինչև որ ես աշ-
խատանքն ավարտեմ: Ես պետք է այս նկարա-
չարդամները վաղը հասցնեմ: Ինձ լույս է հարկա-
վոր, այլապես վարագույրը ցած կթողնեի:

— Մի՞թե դու չես կարող մյուս սենյակում
նկարել, — սառնութեամբ հարցրեց Ջոնսին:

— Ես կուզեմայի քեզ մոտ նստել, — ասաց

Սյուն:— Բացի դրանից, շեմ ուզում, որ դու նայես այդ հիմար տերևներին:

— Երբ վերջացնես, ասա ինձ,— աչքերը փակելով շշմուշաց Ջոնսին, գունատ և անշարժ, ինչպես ցած տապալված արծառ:— Ուզում եմ տեսնել, թե ինչպես է ընկնում վերջին տերևը: Ես հոգնել եմ սպասելուց: Հոգնել եմ մտածելուց: Ուզում եմ ազատվել այն ամենից, ինչ որ կաշկանդում է ինձ՝ թռչել, թռչել ավելի ու ավելի ցածր, ինչպես այդ խեղճ, հոգնած տերևներից մեկը:

— Աշխատիր քնել,— ասաց Սյուն:— Ես պետք է կանչեմ Բերմանին, ուզում եմ նրանից ոսկի որոնող մենակյաց նկարել: Ամենաշատը մեկ բույս կբացակայեմ: Տես հա, մինչև գալս տեղիցդ չշարժվես:

Մերունի Բերմանը նկարիչ էր, որն ապրում էր ներքևի հարկում, նրանց ստուղիայի տակ: Նա արդեն վաթսուներից անց էր, և մորուքը, որ Միքելանջելոյի Մովսեսի մորուքի նման ամբողջովին ծածկված էր խոպուպներով, իջնում էր նրա այծամարդի գլխից դեպի թզուկի մարմինը: Արվեստի մեջ Բերմանը անհաջողակ էր: Նա շարունակ պատրաստվում էր նկարելու իր գլուխգործոցը, բայց նույնիսկ չէր էլ սկսել այն: Արդեն մի քանի տարի է, ինչ ոչինչ չէր նկարում, բացի ցուցանակներից, ռեկլամներից և այդօրինակ խզմզվածքից՝ հանուն մի կտոր հացի: Նա քիչումիչ վաստակում էր, իբրև բնորդ նստելով երիտասարդ նկարիչների մոտ,

որոնց համար պրոֆեսիոնալ բնորդները շատ թանկ էին: Նա թունդ խմող էր, բայց դեռ մի գլուխ խոտում էր իր ապագա գլուխգործոցից: Իսկ այնպես դա մի խիստ շարժերուկ էր, որը շարափնդում էր ամեն մի սենտիմենտալության վրա և նայում էր իրեն իբրև պահապան շան, որը հատկապես դրված էր երկու ջահել նկարչուհիների պահպանության համար:

Սյուն Բերմանին գտավ ներքնահարկի իր կիսախավար խցիկում: Նրանից գինու հատապտղի թունդ հոտ էր փչում: Խցիկի մի անկյունում արդեն քսանհինգ տարի է նկարչատախտակի վրա դրված էր ձեռք շտված մի կտավ՝ պատրաստ ընդունելու գլուխգործոցի առաջին գծերը: Սյուն պատմեց ծերունուն Ջոնսիի ֆանտազիայի և իր հրկյուղների մասին, թե հանկարծ նա, տերևի պես թեթև ու փխրուն, շթուչի իրենցից, երբ կթուլանան նրա անկայուն կապերը աշխարհի հետ: Մերունի Բերմանը, որի կարմիր աչքերը նկատելիորեն արցունքակալեցին, ձայնը գլուխը գցեց, ծիծաղելով նման ապուշային ֆանտազիայի վրա:

— Ի՛նչ,— բղավեց նա:— Հնարավո՞ր է այդպիսի անմտություն՝ մեռնել, որովհետև այդ անիծյալ բաղեղի վրայից տերևները թափվում են: Առաջին անգամ եմ լսում: Ո՛չ, շեմ ցանկանում նստել ձեր այդ ապուշ-մենակյացի համար: Ինչպե՞ս եք թույլ տալիս նրան գլուխը լցնելու նման տխմարություն: Ա՛խ, խե՛ղճ փոքրիկ միսս Ջոնսի:

— Նա շատ հիվանդ է ու թույլ,— ասաց Սյուն,— և տենդից զանազան ֆանտազիաներ են գալիս գլուխը: Շատ լավ, միստր Բերման, եթե չեք ուզում նստել, հարկավոր չէ: Իսկ ես այնուամենայնիվ կարծում եմ, որ դուք զզվելի ծերուկ եք... ծեր ու զզվելի շատախոսի մեկը:

— Այ քեզ իսկական կի՛ն,— բղավեց Բերմանը:— Ո՞վ ասաց, որ չեմ ուզում նստել: Գնա՛նք: Ես գալիս եմ ձեզ հետ: Կես ժամ է ասում եմ, որ ուզում եմ նստել: Աստված իմ: Այստեղ բոլորովին էլ տեղը չէ, որ միսս Ջոնսիի նման լավ աղջիկը հիվանդանա: Երբեք ես կնկարեմ իմ գլուխը քրծոցը, և մենք բոլորս կհեռանանք այստեղից: Այո՛, այո՛:

Երբ նրանք բարձրացան վերև, Ջոնսին ննջում էր: Սյուն վարագույրը ցած թողեց մինչև լուսամուտագոգը և նշան արավ Բերմանին՝ անցնելու մյուս սենյակը: Այնտեղ նրանք պատուհանին մտնեցան և երկյուղով նայեցին ծեր բաղնիչին: Ապա նայեցին իրար առանց մի խոսք ասելու: Պաղ, համառ, ձյունախառն անձրև էր գալիս: Բերմանը, հնամաշ կապույտ շապիկը հագին, ոսկի որոնող մենակյացի դիրքով, ժայռի փոխարեն տեղավորվեց շուռ տված թեյնիկին:

Սյուն առավոտյան Սյուն, արթնանալով կարճատև քնից, տեսավ, որ Ջոնսին լայն շոած, անփայլ աչքերը չի հեռացնում ցած թողած կանաչ վարագույրից:

— Բարձրացրո՛ւ վարագույրը, և ուզում եմ նայել,— շշուկով հրամայեց Ջոնսին:

Սյուն հոգնած հնազանդվեց:

Եվ ի՛նչ! Տեղատարափ անձրևից և քամու ուժգին պոռթկումներից հետո, որոնք ամբողջ գիշեր շղաղարեցին, աղյուսե պատի վրա դեռևս երևում էր բաղնիչի մի տերև՝ վերջի՛նը: Յողունի մոտ՝ մուգ-կանաչավուն, ատամնավոր եզրերին փտման ու քայքայման դեղինով մատնահարված, նա քաջարար կպել էր ճյուղին, գետնից քսան ոտնաչափ բարձրությամբ:

— Դա վերջինն է,— ասաց Ջոնսին:— Կարծում էի, թե գիշերվա ընթացքում անպայման ցած կընկնի: Ես լսում էի քամու ձայնը: Նա ցած կընկնի այսօր, այն ժամանակ ես էլ կմեռնեմ:

— Դե, աստված քեզ հետ,— ասաց Սյուն, հոգնած գլուխը խոնարհելով բարձին:— Գոնե ի՛մ մասին մտածիր, եթե չես ուզում քո մասին մտածել: Ի՛նչ կպատահի ինձ:

Բայց Ջոնսին չպատասխանեց: Հոգին, որ պատրաստվում է խորհրդավոր, հեռավոր ճամփա ընկնելու, աշխարհում ամեն ինչի հանդեպ խորթանում է: Մինչդեռ մեկը մյուսի ետևից կտրատվում էին Ջոնսիին կյանքի ու մարդկանց հետ կապող թելերը, հիվանդագին երևակայությունը ավելի ու ավելի էր տիրում նրան:

Օրն անցավ, և նույնիսկ աղջամուղջին նրանք տեսնում էին, որ բաղնիչի միայնակ տերևը կպած

մտում է իր ցողունին, աղչուսե պատի շենքի վրա: Իսկ հետո, մուժն ընկնելու հետ միասին, նորից հյուսիսային քամի բարձրացավ, և անձրևը անդադար ձեռնում էր պատուհանները, ցած թափվելով հողանդական ցածրիկ տանիքից:

Լուսանալուն պես անգուժ Ջոնսին կարգադրեց նորից բարձրացնել վարագույրը:

Բաղեղի տերևը կրկին իր տեղում էր:

Ջոնսին, երկար պառկած, նայում էր նրան: Հետո կանչեց Սյուին, որը գալօջախի վրա հավի մսաջուրն էր տաքացնում նրա համար:

— Ես անպիտան աղջիկ էի, Սյուդի, — ասաց Ջոնսին: — Երևի այդ վերջին տերևը մնացել է ճյուղին, որ ցույց տա ինձ, թե ես անպիտան աղջիկ էի: Մեղք է իրեն մահ ցանկանալը: Հիմա դու կարող ես մի քիչ մսաջուր տալ ինձ, իսկ հետո՝ պորտվեյնով կաթ... Ասենք չէ. նախ հայելին տուր ինձ, իսկ հետո մեջքիս տակ բարձեր դիր, և ես կնստեմ ու կնայեմ, թե դու ինչպես ես ճաշ եփում:

Մեկ ժամ հետո նա ասաց.

— Սյուդի, ես հուսով եմ, որ երբեք ներկերով կնկարեմ նեապոլի ծոցը:

Կեսօրին բժիշկը եկավ, և Սյուն ինչ-որ պատրվակով նրա ետևից դուրս գնաց նախասենյակ:

— Շանսերը հավասար են, — ասաց բժիշկը, սեղմելով Սյուի նիհար, գողղոջուն ձեռքը: — Լավ խնամքի դեպքում դուք կհաղթեք: Իսկ հիմա ես պետք է այցելեմ էլի մեկ հիվանդի, ներբևում:

Նրա ազգանունը Բերման է: Կարծեմ նկարիչ է: Նույնպես թոքերի բորբոքում: Նա արդեն ծեր է և շատ թույլ, իսկ հիվանդությունը ծանր է: Ոչ մի հույս չկա, բայց այսօր նրան կտեղափոխեն հիվանդանոց, ուր նրա համար ավելի հանգիստ կլինի:

Սյուս օրը բժիշկն ասաց Սյուին.

— Ձեր ընկերուհին վտանգից զերծ է: Դուք հաղթեցիք: Այժմ սնունդ ու խնամք, և ուրիշ ոչինչ: պետք չէ:

Նույն օրվա երեկոյան Սյուն մոտեցավ այն մահճակալին, որի վրա պառկած Ջոնսին բավականություն կապում էր վառ կապույտ, բոլորովին անօգուտ շարժք, և մի ձեռքով գրկեց նրան բարձի հետ միասին:

— Ես քեզ մի բան պետք է ասեմ, սպիտակ մկնիկ, — ասաց նա: — Միսոր Բերմանն այսօր մեռավ հիվանդանոցում թոքերի բորբոքումից: Նա ընդամենը երկու օր միայն հիվանդացավ: Առաջին օրվա առավոտյան դռնապանը խեղճ ծերուկին գտել էր իր սենյակում, հատակին ընկած: Նա գիտակցությունը կորցրել էր: Կոշիկներն ու ամբողջ հագուստը թաց էին և սառուցի պես պաղ: Ոչ ոք չէր հասկանում, թե նա ո՞ւր էր գնացել այդ ահավոր գիշերը: Հետո գտան լամպը, որ դեռ վառվում էր, տեղից շարժած սանդուղքը, մի քանի ցրված վրձիններ և ներկապնակը՝ դեղին ու կանաչ ներկերով: Սիրելիս, նայիք պատուհանից դուրս բա-

վեղի վերջին տերերն: Դու չեի՞ր զարմանում, որ
նա քամուց չի դողում ու չի շարժվում: Այո, սիրե-
լիս, հենց դա էլ Բերմանի գլուխգործոցն է. նա
այդ տերեր նկարել էր այն գիշերը, երբ ընկավ
վերջին տերեր:

ՈՐՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մոգերի նվերները	3
Փարավոնը և խորալը	15
Վերջին տերեր	28

ՕՂԵՆՐԻ

ՎԵՐՋԻՆ ՏԵՐԵՎԸ

Խմբագիր՝ Հ. Կարապետյան
Գեղ. խմբագիր՝ Մ. Բաղդասարյան
Տեխ. խմբագիր՝ Կ. Սարգսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ռ. Հովսեփյան

Պատվեր 299

Տիրաժ 15000

Հանձնված է արտադրության 30/1 1962 թ.:

Ստորագրված է տպագրության 4/IV 1962 թ.:

Թուղթ՝ $70 \times 92^{1/32}$, հրատ. 1,2 մամ., տպ. 1,37 մամ.

= 1,6 պայժ, մամ.:

Գինը՝ 4 կ.:

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների
և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության
№ 1 տպարան, Երևան, Ալեքեբրդյան փողոց № 65:

Մինչև ամբողջ աշխարհին նայանի գրող դառնալը, Օ՝ Հենրին (Վիլյամ Սիդնեյ Պորտեր) ապրել է ձախողակ մարդու արկածալից մի կյանք: Նա եղել է կավբոյ, դեղագործ, գանձապահ, լրագրող, նաշվապահ, բափառաչրջիկ... Վառճում կատարելու մեղադրանքով երկար ժամանակ քաֆեժում է ստիկանությունից, ի վերջո կանգնում դատարանի առաջ և դատապարտվում մի քանի տարվա բանտարկության: Հենց բանտում էլ սկսում է գրել:

Օ՝ Հենրին խիստ քեղմնավոր հեղինակ է. իր կարճատև գրական գործունեության ընթացքում (1901—1910) նա գրել է մոտ երեք հարյուր պատմվածք և «Քաղապարներն ու կաղամբը» պամֆլետային վեպը:

Օ՝ Հենրիի ստեղծագործությունն իր հիմքում դեմոկրատական է: Նա մերկացնում է կապիտալիստական աշխարհի կեղծիքն ու գալլային օրենքները, հակադրելով դրանց հասարակ մարդկանց հոգևոր բարձր առափնույթունները: